ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 08/2025/Վ/Վ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 14 օգոստոսի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ 2025 թվականի հունիսի 2-ին վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 08/2025/Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով և հիմք ընդունելով «aravot.am»

լրատվական կայքի՝ 2025 թվականի մայիսի 30-ի հրապարակումը[1] (այսուհետ՝ Հրապարակում 1) ու «Հայկական Ժամանակ» լրատվական միջոցի՝ 2025 թվականի հունիսի 2-ի հրապարակումը[2] (այսուհետ՝ Հրապարակում 2), 2025 թվականի հունիսի 2-ին կայացրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 08/2025/Վ/Վ որոշումը (այսուհետ նաև՝ Հարուցման որոշում):

1.2 Հրապարակումներով ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1.2.1. Սույն թվականի մայիսի 30-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր «Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյան» էջում կատարել է հետևյալ գրառումը.

«Սրբազան, գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել, ինձ հետ ի՞նչ գործ ունես:» (այսուհետ՝ Գրառում 1):

1.2.2. Սույն թվականի հունիսի 2-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր «Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյան» էջում կատարել է հետևյալ գրառումը.

«Խորհրդային Միության ժամանակ մի անեկդոտ կար: Կարմիր հրապարակում թռուցիկներ են գտնում, որոնց վրա գրված է. «Քաղբյուրոյին գնդակահարել, Կրեմլի պատերը ներկել կանաչ»: Հայկական ռադիոն արձագանքում է. «Իսկ ինչու՞ կանաչ»:

Հիմա որքան հասկանում եմ, մայիսի 29-ի իմ մի գրառման արձագանքը հետևյալն է. «Իսկ ինչու՞ դոմփել»: Մնացած մասով փաստորեն կոնսենսուս ունենք, որ սրբապիղծ «սրբազանների» հարցը պետք է լուծել:

Իսկ առաջարկությունները, դիտողությունները, քննադատությունները «սրբազանների» մասին հետագա գրառումներում նկատի կունենամ:» (այսուհետ՝ Գրառում 2):

1.3. Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 5-ին թիվ 01/2325-2025 գրությամբ Հարուցման որոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է Նիկոլ Փաշինյանին՝

---

[1] Հասանելի՝ https://www.aravot.am/2025/05/30/1490629/

[2] Հասանելի՝ https://www.armtimehttps://www.aravot.am/2025/05/30/1490629/s.com/hy/article/315204

միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

1.4. 2025 թվականի հունիսի 16-ին Հանձնաժողովում մուտքագրվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ներկայացրած դիրքորոշումը:

1.5. Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 24-ին կայացրել է լինգվիստիկական փորձաքննություն իրականացնելու պահանջի մասին թիվ 08/2025/Վ/Վ-1 որոշումը, որը 2025 թվականի հունիսի 24-ի թիվ 01/2543-2025 գրությամբ ուղարկվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որոշման կատարումն ապահովելու նպատակով:

1.6. 2025 թվականի հուլիսի 18-ին Հանձնաժողովում մուտքագրվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թիվ 10892506 գրությունը, որով Հանձնաժողով է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տեսաձայնագրառման, համակարգչատեխնիկական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային և լինգվիստիկական փորձաքննությունների բաժնի ավագ փորձագետ Հ.Ղուկասյանի կողմից 2025 թվականի հուլիսի 17-ին կազմված թիվ 10892506 եզրակացությունը (այսուհետ՝ Փորձագիտական եզրակացություն):

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2025 թվականի հունիսի 16-ին Հանձնաժողովում մուտքագրված գրությամբ վարույթում քննարկվող՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտումների առնչությամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրել է դիրքորոշում (այսուհետ՝ Դիրքորոշում) առ այն, որ.

«Դոմփել» բառը թեև խոսակցական, այնուհանդերձ, անպարկեշտ բառ չէ: Ինչ վերաբերում է Ն.Փաշինյանի կողմից այդ բառի կիրառման կոնկրետ դեպքին, այն

ուղղված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու արժեքների ու հիմունքների պաշտպանությանը, որոնք սահմանված են «Կանոնագիրք հայոց»-ով:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Հանրապետության նախագահի՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-200-Ա հրամանագրով Նիկոլ Փաշինյանը նշանակվել է ՀՀ վարչապետ և պաշտոնավարում է մինչ օրս:

3.2 Սույն թվականի մայիսի 29-ի՝ Կառավարության նիստի ուղիղ հեռարձակման տեսանյութի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ ««Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին հարցի քննարկման շրջանակներում ՀՀ վարչապետը նշել է հետևյալը (տեսանյութի 24:06 րոպե).

«Մենք մեր եկեղեցիներին էլ ենք տենց վերաբերվում: Ես էս վերջերս Կրթության նախարարին մի քանի եկեղեցի, տաճարներ, բառիս բուն իմաստով մի քանի տաճար, տաճար, մոմ վառելու այցելելուց հետո Կրթության նախարարին հարց եմ տալիս, ասում եմ՝ պատմամշակութային հուշարձան ա, չէ՞, որը էսօր կառավարում ա ոչ Կառավարությունը, ոչ էլ ՊՈԱԿ ա կառավարում: Մենք խնդիր դնու՞մ ենք էդտեղի սանիտարական վիճակի մասին: Ես պաշտոնապես ասում եմ, որ եկեղեցիները չուլանացված են, չուլանացված: Ով որտեղ ինչ ոչ պետքական ապրանք ունի, մեկ էլ գնում ես, տեսնում ասենք ինչ-որ ավելացած մետլախ, պարկով ցեմենտ, «оболовк»-ի հին կտորներ, ենթադրենք բան, арматура-ի բան, հին, ժանգոտ կտորներ: Ասենք մտնում ես, մարդը ինչի՞ համար ա եկեղեցի մտնում, մտնում ա ինչ-որ հոգևոր հաղորդակցության ունենալու, չէ՞: Մեկ էլ մտնում ես, տեսնում ես ստեղ աղբ ա լցրած, էնտեղ աղբ ա լցրած, էնտեղ ինչ-որ մեկի հին շորերն են, էնտեղ մեկը կոշիկներն ա դրել, էնտեղ մեկը իրա հին կռավաթն ա բերել դրել: Բայց ոնց կարելի ա սենց, էլի, ինչքան կարելի ա էսքան կեղծ լինել, հարգելի ներկաներ, ինչքան կարելի ա էսքան կեղծ...

ինչքան կարելի ա էդքան խոսել սրբության մասին ու էդքան արտասուրը ընել: Ինչքան կարելի ա ոտի տակ տալ սրբությունները: Մեկ էլ վայ, համալիրում բան ա եղել: (...)»:

3.3 Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ մի շարք հոգևորականներ արձագանքել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նշված խոսքերին՝ քննադատելով դրանք տարբեր հարթակներում, այդ թվում՝ սոցիալական էջերում կատարված գրառումներում[3]:

3.4 Սույն թվականի մայիսի 30-ին՝ Գրառում 1-ը կատարելուց հետո, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր «Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյան» էջում կատարել է հետևյալ գրառումը. *«Իսկ անհրաժե՞շտ է առերեսվել հարցին, թե մեր եպիսկոպոսաց դասից քանի՞ հոգի է հավատարիմ կուսակրոնության ուխտին:»:*

3.5 Սույն թվականի հունիսի 6-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր «Nikol Pashinyan / Նիկոլ Փաշինյան» էջում կատարել է հետևյալ գրառումը. *«Եթե կուսակրօն մարդ կին առնէ կամ կնոջ հետ ապրի, թող հանուի պաշտօնէն եւ չմասնակցի եկեղեցւոյ պաշտօնական արարողութիւններուն:*

Յովհաննես Օձնեցի, «Կանոնագիրք Հայոց»»:

3.6 Փորձագիտական եզրակացության ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

3.6.1 Փորձաքննության համար Հանձնաժողովի կողմից փորձագետին առաջադրվել էին հետևյալ հարցերը.

«1. Որո՞նք են «դոմփել» բառի բառարանային, ոչ բառարանային և փոխաբերական իմաստները, ժարգոնային, առօրյա-խոսակցական ոճերում նշված բառն ինչպիսի՞ կիրառություն ունի: Այդ իմաստներով բառարանային ո՞ր բառերին կարող է դառնալ հոմանիշ:

2. «Գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել» արտահայտությունում «դոմփել» բառն իր ո՞ր փոխաբերական իմաստով է գործածված:

---

[3] Հասանելի՝ https://168.am/2025/05/29/2222542.html,
https://www.aravot.am/2025/05/29/1490449/

3. Ի՞նչ իմաստային նրբերանգով կարող է «դոմփել» բառն ընկալվել հասարակության անդամների կողմից:»:

3.6.2 Փորձագիտական եզրակացությամբ արձանագրվել է հետևյալը.

«Հայերենում **դոմփել** բառը հայերեն խոսակցական լեզվի բառաշերտին պատկանող իմաստային միավոր է, որը մերօրյա ժարգոնային բառապաշարում ունի երկու բացատրություն.

1. Հարվածել, խփել:

2. Սեռական հարաբերություն ունենալ:

Հարվածել, խփել իմաստների արտահայտումը թերևս պայմանավորված է նմանաձայնության հիմունքով, ինչպես օրինակ՝ հայերենում ունենք **դոփ** - դոփելու հարվածի ձայնը, այս արմատով՝ **դոմփել**, նշանակում է ոտքով գետնին խփել, **բամփ** - բամփելու հարվածի ձայնը, այս արմատով՝ **բամփել**, նշանակում է *1. Ձեռքի բաց ափով խփել, 2. Թաթով խփել:* Նմանօրինակ նմանաձայնություն-բառերը հայերենում շատ են՝ **դըմբ, դրըմբ** - դմբացնել, դրմբացնել, **թըմփ, թրըմփ** - թմփացնել, թրմվացնել և այլն:

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» հանդիպում է նաև **դմփել** բայը, որը նշանակում է՝ 1. Ձեռքով խփել՝ հարվածել:

2. (փոխաբերական) Ծանր հարված հասցնել, վնասել:

Դոմփել, դմփել բայերը՝ *հարվածել, խփել* իմաստներով նման են: Հավանաբար, առկա է նմանաձայնության դրսևորում՝ դոմփ-դըմփ:

Ինչ վերաբերում է «դոմփել» բառի երկրորդ բացատրությանը, այն է՝ սեռական հարաբերություն ունենալ, ապա նշենք, որ այդ իմաստային տարբերակը գուցե և գործածվում է նմանաձայնության կամ գործողության նմանության հիմունքով: Այն ժարգոնային գործածության տիրույթում ակտիվացել է 2000-ական թվականներից:

Հավելենք, որ խոսակցական բառապաշարի մերօրյա զարգացումներում **դոմփել** բառն ունի նաև այլ նշանակություններ, այսպես ասած՝ բառի այլևայլ կիրառումներ (вариации употребления слова, ինչպես՝

«Երկու շիշ դոմփեցինք»: Այսինքն թե՝ *երկու շիշ ալկոհոլ խմեցինք:*

«Մի հատ հավ դոմփինք»: Այսինքն թե՝ *ագահորեն հավ կերանք* և այլն:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե որոնք են «դոմփել» բառի հնարավոր բառարանային հոմանիշները:

Քանի որ տվյալ բառն ունի երկու տարբեր նշանակություն, անդրադառնանք առանձնաբար:

Ստորև տրվում են **հարվածել** և **կենակցել** գլխաբառերի հոմանշային շարքերն ըստ բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա.Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի».

Դոմփել՝ *հարվածել, խփել* իմաստներով - զարկել, զարնել, խփել, թխկացնել, բախել, ծեծել, խարանել, ձաղկել, գանակոծել, կռփել, կոփահարել, բռնցահարել, բամփել, հարկանել (գրբ.), (բրբ.) տփել, տխել, չռփել: 2 Պատժել, պատուհասել: 3. Տես Հարձակվել: 4. Տես Քննադատել:

Դոմփել՝ *սեռական հարաբերություն ունենալ* իմաստով - մերձավորել, մերձենալ, մոտենալ, զուգավորվել, կողակցել, ննջել, հանձնվել, կցվել (գռեհկ.) ապրել, կամքը կատարել, կողքը տաքացնել, կյանքը կապել, հետը լինել, հետը քնել, ծոցը մտնել, տեղաշորը մտնել, երկու ոտ մի գլուխ լինել (խսկց.), (բրբ.) նստել, վերկենալ, տանիքը ման գալ, երդիկից նայել, գողինքը մտնել, մեջկապը (գոտին) քակել (բացել), (հնց.) շարաբնակել, կաճառել, կենցաղակցել (հզվդ.):

Իմիջիայլոց. Ա.Սուքիասյանի նույնանուն բառարանում շինել բայի 3-րդ նշանակությունն է՝ *զուգավորել* (1 նշանակությամբ, էջ՝ 504), այն է՝ *կենակցել, մերձենալ, մերձենալ, մերձավորվել* և այլն (էջ՝ 205): Հայերենի արդի ժարգոնային բառապաշարում **շինել** բառի նշանակություններից մեկն է՝ **սեռական հարաբերություն ունենալ:** Նույն նշանակությունն ունեն ժարգոնային **կկել, ժխշել** (1 նշ.), **խզարել** (2 նշ.) բառերը:

(...)

2. Առաջադրված այն հարցին, թե «Գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել» արտահայտությունում «դոմփել» բառն իր ո՞ր փոխաբերական իմաստով է գործածված, ապա հավելենք. քանի որ ժարգոնային լեզվում «դոմփել» բառն իր երկու իմաստներով էլ համարվում է գործածական միավոր, հետևաբար իմաստային առումով բառի գործածման նպատակի պարզաբանումը դուրս է լեզվաբան-փորձագետի իրավասության սահմաններից:

3. Առաջադրված 3-րդ հարցի, այն է՝ ի՞նչ իմաստային նրբերանգով կարող է «դոմփել» բառն ընկալվել է հասարակության անդամների կողմից, պարզաբանումը դուրս է լեզվաբան-փորձագետի հատուկ գիտելիքների շրջանակից:»:

IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:

4.2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Պետական քաղաքական պաշտոններն են (...) վարչապետի (...) պաշտոնները, (...) :»:

4.3. Օրենքի 25-րդ հոդվածով սահմանվում է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և նախատեսվում է.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս: (...)»:

4.4. Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները: (...)»:

4.5. Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:»:

4.6. Վարքագծի կանոնագրքի 4-րդ բաժնի 1-ին գլխով նախատեսվում են բարեվարքության և հարգալիրության սկզբունքից բխող՝ զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական մեդիայով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հաղորդակցությանը վերաբերելի վարքագծի կանոնները:

4.7. Նշված գլխում ներառված՝ Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի համաձայն.

«48. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:»:

4.8. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

2. Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

3. Եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին, պաշտոն զբաղեցնող անձին և նրա վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (առկայության դեպքում):

(...)

6. (...)

Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:»:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում քննարկվում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից կատարված գրառման իրավաչափության հարցը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

Ըստ այդմ, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

(...)

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն.

«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության,

տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:[4]

Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ սկզբունքները չեն բացառում հնարավորությունը, որ որոշ արտահայտություններ կարող են Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո տրամադրվող պաշտպանության շրջանակից դուրս լինել: Փաստացի տվյալները կամ արժեքների կամ զգացմունքների վերաբերյալ պնդումները կարող են պաշտպանվել 10-րդ հոդվածով,

---

[4] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

եթե դրանք, օրինակ, արտահայտում են անձի համոզմունքները կամ ինքնությունը կամ նպաստում են հանրային կարծիքի ձևավորմանը, միաժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ նույնը վերաբերելի չէ վիրավորանքներին, որոնց պաշտպանության համար անհրաժեշտ են համոզիչ պատճառներ:

Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ 10-րդ հոդվածի պաշտպանության ներքո գերազանցապես ընդգրկվում են կարծիքների արտահայտումը և տեղեկատվության ու գաղափարների տրամադրումն ու ստացումը, որը ներառում է քննադատական արտահայտություններն ու դիտարկումները: Միաժամանակ, խոսքի որոշ դրսևորումներ, ինչպիսիք են անպարկեշտ կամ անվայել արտահայտությունները, գաղափարների արտահայտման տեսանկյունից էական դերակատարում չունեն: Վիրավորական արտահայտությունը կարող է դուրս լինել արտահայտման ազատության պաշտպանության շրջանակից, եթե նման արտահայտությունը չարամիտ վիրավորանք է պարունակում և դրա միակ նպատակը վիրավորելն է:[5]

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ գռեհիկ արտահայտությունների գործածումն ինքնին բավարար չէ 10-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար, քանի որ նման արտահայտությունների գործածումը կարող է հետապնդել ոճային նպատակ: Եվրոպական դատարանի գնահատմամբ ոճը արտահայտման ձևի դրսևորում է, որը արտահայտման բովանդակության հետ մեկտեղ պաշտպանվում է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո:[6]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետք է հստակ տարանջատում կատարվի քննադատության և վիրավորանքի միջև: Եթե խոսքի ցանկացած դրսևորման նպատակը պարզապես վիրավորելն է, ապա համաչափ սանկցիան, որպես կանոն, չի հանգեցնի Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման:

---

[5] Տես, օրինակ, Ռուջակն ընդդեմ Խորվաթիայի (Rujak v. Croatia) գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 57942/10, §§ 27-29

[6] Տես, օրինակ Ուժն ընդդեմ Հունգարիայի (Uj v. Hungary) գործով 2011 թվականի հուլիսի 19-ի վճիռը, դիմում no. 23954/10, § 20

Միաժամանակ, միայն վիրավորական կամ կոպիտ արտահայտությունների ենթատեքստի մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով է, որ հնարավոր կլինի կատարել նման տարանջատում:[7]

Անգամ այն դեպքում, երբ վիրավորական արտահայտություններ ներառող խոսքն ունեցել է նաև այլ նպատակներ, օրինակ, հակադարձելու անձի հասցեին հնչած մեղադրանքներին կամ քննադատությանը, այն կարող է հատել իրավաչափության սահմանը: Այսպես, օրինակ, Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետության նախագահն իրեն քննադատող անձի հասցեին նշել է, որ նա հոգեբուժական օգնության կարիք ունի:

Եվրոպական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ տվյալ արտահայտությունը հնչեցվել է պետության ղեկավարի կողմից և լայնորեն տարածվել է մի շարք զանգվածային լրատվության միջոցների կողմից, ուստի այն կարող էր անխուսափելիորեն վնասել հասցեատիրոջ հեղինակությունը և նրա նկատմամբ կանխակալ վերաբերմունք ձևավորել՝ անկախ այն հանգամանքից՝ արտահայտությունը կատարվել է ուղիղ, թե փոխաբերական իմաստով: Այս և այլ դեպքերում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ **ընդհանուր առմամբ բարձրաստիճան պաշտոնյաների խոսքը ավելի մեծ ազդեցություն ունի, ինչից ելնելով՝ ավելի խնդրահարույց կարող է դիտարկվել:**

Եվրոպական դատարանը, ըստ այդմ, հարցը դիտարկել է անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի համատեքստում՝ նշելով, որ այս դեպքում պետք է հաշվի առնվի՝ արդյոք հնչեցված խոսքը նպաստել է հանրային նշանակության հարցի շուրջ բանավեճին, խոսքի հասեցատիրոջ հայտնիության աստիճանը, խոսքին նախորդած՝ նրա վարքագիծը, խոսքի բովանդակությունը, ձևը և հետևանքները: Նշված վճռով Եվրոպական դատարանը արձանագրել է, որ **դիմումատուն կարող էր իր հասցեին հնչեցված մեղադրանքները հերքել առանց նման արտահայտությունների կիրառման, որոնք անձնական վիրավորանք են պարունակել, չեն նպաստել**

---

[7] Տես, օրինակ, Գասպարին ընդդեմ Հայաստանի (Gaspari v. Armenia (No. 2)) գործով 2023 թվականի հուլիսի 11-ի վճիռը, դիմում no. 67783/13, § 27, Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի (Mesić v. Croatia) գործով 2022 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմում no. 19362/18, § 33

հանրային նշանակության հարցերի շուրջ քաղաքական բանավեճին և անցել են թույլատրելի քննադատության սահմանները:[8]

Եվրոպական դատարանը նաև կարևորել է այն հանգամանքը, թե ում դեմ է խոսքն ուղղված: Մասնավորապես, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի համաձայն՝ պետք է տարանջատում մտցվի մասնավոր անձանց և հանրային ենթատեքստում գործող անձանց՝ հասարակական կամ քաղաքական գործիչների միջև: Թույլատրելի կամ իրավաչափ քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ այն ուղղված է քաղաքական կամ հասարակական գործիչների, քան մասնավոր անձանց նկատմամբ:[9]

Կապված այն հարցի հետ՝ արդյոք եկեղեցական պաշտոնյաները կարող են համարվել հասարակական գործիչ՝ հարկ է նկատել, որ եկեղեցական պաշտոնյայի վերաբերյալ հրապարակմանն առնչվող՝ Վերլասգրուպպե Նյուզ ԳՄԲՀ և ԲՈԲԻ-ն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանը համաձայնել է ավստրիական դատարանների այն եզրահանգմանը, որ թեև վիճարկվող խոսքի հասցեատերը Հռոմի կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյա էր, սակայն նա լայն հանրությանը հայտնի չէր, ուստի չէր կարող համարվել հասարակական կամ հանրային գործիչ:[10]

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ վիրավորական արտահայտությունները չեն օգտվում Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի ներքո տրամադրվող պաշտպանությունից այն դեպքում, երբ դրանց միակ նպատակը վիրավորելն է, և դրանք այլ կերպ չեն նպաստում հանրային կարևորություն ունեցող հարցի քննարկմանը կամ հատում են թույլատրելի քննադատության սահմանները: Միաժամանակ, մասնավոր անձանց նկատմամբ

---

[8] Մեսիչն ընդդեմ Խորվաթիայի (Mesic v. Croatia) գործով 2022 թվականի մայիսի 5-ի վճիռ, դիմում no. 19362/18, §§ 84-85, 101-102, 104-105

[9] Տես, օրինակ, Լոբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 54, Ռոզեյրո Բենտոն ընդդեմ Պորտուգալիայի (Roseiro Bento v. Portugal) գործով 2006 թվականի ապրիլի 18-ի վճիռը, դիմում no. 29288/08, § 42, Վերլասգրուպպե Նյուզ ԳՄԲՀ և ԲՈԲԻ-ն ընդդեմ Ավստրիայի (Verlagsgruppe News GMBH and BOBI v. Austria) գործով 2012 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 59631/09, § 78

[10] Վերլասգրուպպե Նյուզ ԳՄԲՀ և ԲՈԲԻ-ն ընդդեմ Ավստրիայի (Verlagsgruppe News GMBH and BOBI v. Austria) գործով 2012 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 59631/09, § 79

թույլատրելի քննադատության սահմաններն ավելի նեղ են, քան հասարակական կամ քաղաքական գործիչների:

Միաժամանակ, Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանավեճերի սահմանափակման շրջանակը հատկապես նեղ է:[11]

Վերլասգրուպպե Նյուզ ԳՄԲՀ և ԲՈԲԻ-ն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Հռոմի կաթոլիկ եկեղեցու եկեղեցականի նույնասեռականության վերաբերյալ հրապարակումը վերաբերել է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի՝ նշելով, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ քննարկմանը նպաստում են նաև այնպիսի հրապարակումները, որոնք վերաբերում են ազդեցիկ կրոնական համայնքի կողմից քարոզվող բարոյական տեսակետին, ինչպես նաև նրան, թե որքանով են Եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաները պահպանում Եկեղեցու կողմից հռչակված չափանիշները:[12]

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հանրային բանավեճի մասնակցող յուրաքանչյուր անձ չպետք է հատի որոշակի սահմաններ՝ հատկապես կապված այլոց հեղինակության կամ իրավունքների նկատմամբ հարգանքի հետ, միաժամանակ, չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը թույլատրելի է:[13]

Եվրոպական դատարանը, միաժամանակ, արձանագրել է, որ քաղաքական դերակատարներն ունեն նաև պարտականություններ և պատասխանատվություն: Ըստ այդմ, Եվրոպական դատարանը կարևոր է համարել, որ քաղաքական գործիչները, հանրային կերպով արտահայտվելիս, խուսափեն այնպիսի մեկնաբանություններից, որոնք կարող են հանգեցնել անհանդուրժողականության, ինչպես նաև հատկապես

---

[11] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 43

[12] Վերլասգրուպպե Նյուզ ԳՄԲՀ և ԲՈԲԻ-ն ընդդեմ Ավստրիայի (Verlagsgruppe News GMBH and BOBI v. Austria) գործով 2012 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, դիմում no. 59631/09, § 75-76

[13] Տես, օրինակ, Ֆլյոռին ընդդեմ Ֆրանսիայի (Fleury v. France) գործով 2010 թվականի մայիսի 11-ի վճիռը, դիմում no. 29784/06, § 45

զգուշավոր լինեն ժողովրդավարությունը և դրա սկզբունքները պաշտպանելու հարցում՝ առաջնորդվելով իրենց հիմնական՝ կառավարելու նպատակով:[14]

Անդրադառնալով համացանցում արտահայտման ազատությանը, այդ թվում՝ կապված քաղաքական խոսքի և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ քննարկումների հետ՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ համացանցը դարձել է արտահայտման ազատության իրավունքի իրացման առանցքային միջոցներից մեկը, որը տրամադրում է էական գործիքներ քաղաքական և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին առնչվող միջոցառումների և քննարկումների մասնակցելու համար: Այնուամենայնիվ, համացանցի գործածումը պարունակում է նաև որոշակի ռիսկեր. համացանցով տարածվող բովանդակությունը և հաղորդակցությունը շատ ավելի մեծ ռիսկ են ներկայացնում մարդու իրավունքները և ազատությունները, հատկապես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը վնասելու տեսանկյունից: Հրապարտությունը և հակահիրավական խոսքի այլ դրսևորումները, այդ թվում՝ ատելության խոսքը և բռնության հրահրող խոսքը, կարող են տարածվել այնպիսի արագությամբ, ինչպես նախկինում երբեք հնարավոր չէր՝ ամբողջ աշխարհում, մի քանի վայրկյանի ընթացքում, և երբեմն, կարող են հասանելի մնալ երկարատև ժամանակի ընթացքում:

Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը արձանագրել է, որ համացանցում տարբեր հարթակները հաճախ ունեն հաղորդակցության առանձնահատկություններ, օրինակ՝ մեկնաբանությունները հաճախ խոսակցական, ժարգոնային կամ վուլգար լեզվով են գրվում:

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ **երբ քաղաքական գործիչներն օգտագործում են սոցիալական ցանցերը քաղաքական նպատակներով, նրանք կրում են նաև որոշակի պարտականություններ և պատասխանատվություն:** Նշված պարտականությունների և պատասխանատվության առկայությունը կապված է հասարակությունում քաղաքական գործիչների

[14] Տես Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 64 և Ֆերետն ընդդեմ Բելգիայի (Feret v. Belgium) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 15615/07, § 75

առանձնահատուկ դերի և կարգավիճակի հետ, որոնցից ելնելով՝ նրանք առավել հավանական է, որ ազդեցություն կունենան ընտրողների վարքագծի վրա, ինչից ելնելով՝ նրանք պետք է առավել մեծ զգոնություն դրսևորեն: Ըստ այդմ, Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը արտահայտման ազատության իրավունքի խախտում չի արձանագրել այն դեպքում, երբ տեղական ընտրություններում թեկնածուին քրեական պատասխանատվության էին ենթարկել (տուգանքի տեսքով) այն բանի համար, որ վերջինս չի հեռացրել իր գրառման ներքո այլ օգտատերերի կողմից արված՝ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները:

Եվրոպական դատարանը նաև ընդգծել է, որ նշված մեկնաբանությունը չպետք է հասկանալ որպես քաղաքական խոսքի վերաբերյալ Եվրոպական դատարանի արդեն իսկ առկա նախադեպային իրավունքը վերացնող:[15]

Հանձնաժողովը Կանոնագրքի 48-րդ կետի խախտում արձանագրելու չափանիշներին անդրադարձել է 2025 թվականի հունիսի 3-ի թիվ 03/2025/Վ/Վ եզրակացությամբ, որով արձանագրել է հետևյալը.

« (...) Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտում արձանագրելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ սոցիալական մեդիայում հանրային պաշտոն զբաղեցնող անձի վարքագիծը հեղինակազրկել է հանրային իշխանության մարմնի գործունեությունը կամ կարող էր վնասել, նսեմացնել կամ արատավորել հանրային ծառայության հեղինակությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ նման ազդեցությունը հնարավոր է հետևյալ երկու դեպքում՝

1) հանրային պաշտոն զբաղեցնող անձը իր գրառումներով կամ սոցիալական մեդիայում այլ վարքագծով կասկածի տակ է դրել, քննադատել է, այլ կերպ բացասական լույսի ներքո է դիտարկել հանրային իշխանության որևէ մարմնի գործունեությունը կամ առանձին գործողությունը կամ

2) հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ սոցիալական մեդիայում վարքագիծը հանգեցրել է բարեկրթության և հարգալիրության սկզբունքի խախտման, և նման

---

[15] Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Sanchez v. France [GC]) գործով 2023 թվականի մայիսի 15-ի վճիռ, դիմում no. 45581/15

խախտումը ողջամտորեն կարող էր խիստ բացասաբար ընկալվել հանրության կողմից՝ այդպիսով վնասելով, նսեմացնելով կամ այլ կերպ արատավորել հանրային ծառայության հեղինակությունը:

(...)

Հանձնաժողովն ընդգծում է, որ նույնական չափանիշը վերաբերելի է Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետին. քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքական բանավեճի շրջանակներում կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի վերաբերյալ սոցիալական ցանցերում գրառումներ կատարելիս Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտում արձանագրելու շեմն ավելի բարձր է, քան քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից՝ այլ թեմաներով կատարված գրառումների կամ այլ պաշտոնատար անձանց կողմից կատարված գրառումների պարագայում: Միաժամանակ, սա չպետք է մեկնաբանվի որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից սոցիալական մեդիայում արտահայտման ազատության իրավունքի կիրառման բացարձակություն. Հանձնաժողովն ընդգծում է, որ անգամ քաղաքական խոսք պարունակող կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ կատարված գրառումները կարող են հատել իրավաչափության սահմանը՝ հանգեցնելով Վարքագծի կանոնագրքի 48-րդ կետի խախտման:

Հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 14-ի թիվ 08/2024-Վ/Վ եզրակացությամբ Հանձնաժողովի մեկնաբանությունները, ինչպես նաև Եվրոպական դատարանի վերոգրյալ նախադեպային պրակտիկան՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սոցիալական մեդիայում ցանկացած պարագայում բարեկրթության և հարգալիրության սկզբունքներին համահունչ չեն կարող համարվել այնպիսի գրառումները, որոնք ներառում են արտահայտման ազատության իրավունքով չպաշտպանվող խոսք, մասնավորապես՝

1) խիստ անձնական բնույթի կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտություններ ներառող խոսքը,

2) թույլատրելի քննադատության սահմանները հատող խոսքը,

3) ազգության, ռասայի, կրոնական պատկանելիության, սեռի, տարիքի, առողջության և ցանկացած այլ անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշի հիմքով ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք կամ խտրականություն հարուցող խոսքը,

4) բռնության կոչերը կամ քարոզումը կամ արդարացումը,

5) զրպարտությունը:

Հանձնաժողովը նաև ընդգծում է, որ անկախ այն հանգամանքից, որ համացանցում, հատկապես՝ սոցիալական ցանցերում, հաճախ օգտատերերը գործածում են խոսակցական, ժարգոնային, անգամ վուլգար բնույթի բառեր ու արտահայտություններ, բարեկրթության և հարգալիրության սկզբունքներին համահունչ չեն կարող համարվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից խիստ վուլգար, գռեհիկ արտահայտությունների գործածումը: Այս մոտեցումը պայմանավորված է բարեվարքության սկզբունքից բխող՝ պաշտոնին վայել վարքագիծ դրսևորելու պարտականությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ համացանցում հաղորդակցության առանձնահատկություններից ելնելով՝ պաշտոնատար անձինք պարտավոր են առավել բարձր զգոնություն և զգուշավորություն դրսևորել գրառումներ կատարելիս՝ նկատի ունենալով այն ազդեցությունը, որը նրանց խոսքը կարող է ունենալ լսարանի վրա, ինչն արձանագրվել է նաև Եվրոպական դատարանի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ արտահայտման վերոգրյալ բոլոր ձևերը ողջամտորեն կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը: Այնուամենայնիվ, այս հանգամանքի գնահատումը պետք է իրականացվի յուրաքանչյուր դեպքով՝ առանձին՝ հիմք ընդունելով ոչ միայն ***կիրառված արտահայտությունների նշանակությունը, բնույթը և ընդհանուր գրառման բովանդակությունը, այլ նաև գրառման հանրային ընկալումը****:»:*

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից կատարված Գրառում 1-ը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում գնահատել՝ արդյոք նշված գրառումը խախտել է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և ողջամտորեն կարող էր խիստ բացասաբար ընկալվել հանրության կողմից:

Թեև Գրառում 1-ում նշում չի կատարվել առ այն, թե ում հասցեին է այն ուղղված և ինչի առթիվ, այնուամենայնիվ, գրառման բովանդակությունից Հանձնաժողովը եզրակացնում է, որ այն վերաբերում է կոնկրետ հոգևորականի (գրառման մեջ գործածվում է «Սրբազան» դիմելաձևը) և գրառումը կատարվել է՝ ի պատասխան ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի վերաբերյալ կամ նրա հասցեին տվյալ հոգևորականի կողմից կատարված քննադատական կամ այլ բնույթի խոսքին («ինձ հետ ի՞նչ գործ ունես» արտահայտության կիրառումից ակներև է, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը կոչ է անում հոգևորականին չքննարկել կամ չքննադատել իրեն կամ արտահայտում է իր կարծիքն առ այն, որ տվյալ հոգևորական սպասավորը չի կարող քննադատել ՀՀ վարչապետին:

Անդրադառնալով «դոմփել» բառի նշանակությանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փորձագիտական եզրակացության համաձայն՝ դոմփել բառը հայերեն խոսակցական լեզվի բառաշերտին պատկանող իմաստային միավոր է, որը մերօրյա ժարգոնային բառապաշարում ունի երկու բացատրություն.

1. Հարվածել, խփել:

2. Սեռական հարաբերություն ունենալ:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի կողմից «դոմփել» բայը գործածվել է իր երկրորդ նշանակությամբ՝ «սեռական հարաբերություն ունենալ» իմաստով: Այսպես, Դիրքորոշմամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ նշված բառի կիրառումը ուղղված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու արժեքների ու հիմունքների պաշտպանությանը, որոնք սահմանված են «Կանոնագիրք հայոց»-ով: Բացի այդ, սույն թվականի հունիսի 6-ին կատարված՝ սույն եզրակացության 3.5-րդ կետով ներկայացված գրառմամբ ՀՀ վարչապետը մեջբերել է Հակոբ Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի դրույթը, որը վերաբերում է կուսակրոն եկեղեցականների կողմից կուսակրոնության ուխտը խախտելուն, իսկ Գրառում 1-ից հետո ՀՀ վարչապետը կատարել է սույն եզրակացության 3.4-րդ կետով ներկայացված գրառումը, որը ևս վերաբերում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եպիսկոպոսաց դասի կողմից կուսակրոնության ուխտի պահպանմանը: Նմանաբովանդակ գրառումներ ՀՀ

վարչապետ Ն.Փաշինյանը բազմիցս կատարել է նաև Գրառում 1-ի կատարմանը հաջորդող ամիսների ընթացքում:

Հանձնաժողովը Գրառում 1-ին նախորդած և հաջորդած վերաբերելի մեդիա հրապարակումների ուսումնասիրման արդյունքում գտնում է, որ ՀՀ վարչապետը Գրառում 1-ով պատասխանել կամ արձագանքել է սույն թվականի մայիսի 29-ի ՀՀ կառավարության նիստին իր կողմից եկեղեցիների վերաբերյալ կատարած հայտարարություններին արձագանքած հոգևորականներից մեկին:

Միաժամանակ, Գրառում 1-ով ՀՀ վարչապետը չի հասցեագրել իր հասցեին հնչած քննադատությունները, այլ կոչ է արել տվյալ հոգևորականին «իր հետ գործ չունենալ» կամ, այլ կերպ ասած, իրեն չքննադատել: Հանձնաժողովի գնահատմամբ «գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել» արտահայտության կիրառմամբ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նպատակ է ունեցել մատնացույց անելու տվյալ հոգևորականի կողմից կուսակրոնության ուխտը դրժելու հանգամանքը՝ դրանով իսկ ցույց տալով, որ վերջինս չի հետևում եկեղեցական կանոններին, ուստի ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի գնահատմամբ՝ չի կարող կամ բարոյական իրավունք չունի քննադատելու ՀՀ վարչապետին:

Հանձնաժողովն ընդգծում է, որ այն հանգամանքը, թե արդյոք Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բարձրաստիճան սպասավորները պահպանում են եկեղեցական կանոնները, կարող է լինել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ բանավեճի քննարկման առարկա: Եկեղեցու հետևորդներն իրավունք ունեն տեղեկացված լինելու՝ որքանով են բարձրաստիճան հոգևորականները համապատասխանում Եկեղեցու կողմից հռչակված բարոյական չափանիշներին: Հանձնաժողովը նաև գտնում է, որ եկեղեցական շինությունների պահպանության հարցերը ևս կարող են հանրային հետաքրքրության առարկա հանդիսանալ՝ նկատի ունենալով դրանց մշակութային արժեքը:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ինչպես սույն թվականի մայիսի 29-ի Կառավարության նիստում ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի խոսքերին ի պատասխան՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սպասավորների

արձագանքը, այնպես էլ Գրառում 1-ը վերաբերել են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտնում է, որ Գրառում 1-ով գործածված արտահայտությունները գռեհիկ նրբերանգ են հաղորդում գրառմանը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Այսպես, Հանձնաժողովն ընդգծում է, որ Գրառում 1-ում գործածված ձևակերպումները հնարավորություն չեն ընձեռել միայն այդ գրառման ընթերցմամբ հասկանալու, որ գրառումը կատարվել է ի պատասխան քննադատությունների կամ բարձրացնում է եկեղեցական կանոնագրքի պահպանման հարցեր: Գրառմամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի անդրադարձել իր հասցեին հնչեցված քննադատություններին, չի քննարկել դրանք, անգամ չի մատնանշել, թե ինչու դրանց չի անդրադառնում: Նշվածի համատեքստում գրառման մեջ գործածված «գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել» արտահայտությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, ընկալվում է առավելապես որպես կոպիտ և անվայելուչ արտահայտություն՝ պայմանավորված ինչպես «դոմփել» բայի գործածմամբ, այնպես էլ այն հանգամանքով, որ ՀՀ վարչապետը գրառմամբ ակնարկում է, որ հոգևոր սպասավորը ոչ միայն խախտում է կուսակրոնության ուխտը, այլ նաև սեռական հարաբերությունների մեջ է գտնվում իր հետ ազգակցությամբ կապված անձի կնոջ հետ, ինչը բարոյապես էլ ավելի քննադատելի է:

Հանձնաժողովն ընդգծում է, որ թեև կուսակրոն հոգևորականի կողմից կուսակրոնության ուխտը պահպանելու հանգամանքը կարող է համարվել հանրային հետաքրքրության առարկա, նույնը չի կարելի ասել այն անձի ինքնության առնչությամբ, ում հետ տվյալ հոգևորականը ենթադրաբար գտնվում է սեռական հարաբերությունների մեջ: Թեև հոգևորականին կամ նրա հետ սեռական հարաբերությունների մեջ գտնվող կնոջը նույնականացնող տվյալներ Գրառում 1-ում չեն հրապարակվել, այնուամենայնիվ, ՀՀ վարչապետի կողմից ինքնին այդ հանգամանքի հրապարակումը, անգամ անանուն կերպով, կարող է հեղինակազրկել տարբեր հոգևորականների, հանգեցնել նրանց և նրանց հետ ազգակցական կամ խնամիական

կապ ունեցող երրորդ անձանց անձնական կյանքի վերաբերյալ լայն հանրության կողմից շահարկումների:

Հանձնաժողովը 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 07/2025/Վ/Վ եզրակացությամբ արձանագրել է, որ ՀՀ վարչապետն անուղղակի կերպով ընտրվում է խորհրդարանական ընտրությունների շրջանակներում, ուստի ՀՀ վարչապետը, հաշվի առնելով նաև, որ նա քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է, պետք է օգտվի արտահայտման ազատության հատկապես լայն սահմաններից, որոնք, այնուամենայնիվ, չեն կարող նույնանալ պատգամավորական խոսքի արտահայտման ազատության առավել լայն շրջանակների հետ՝ նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում խորհրդարանական խոսքի առանձնահատուկ կարևորությունը:

Այնուամենայնիվ, հիմնվելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա՝ Հանձնաժողովը գտնում է, որ բարձրաստիճան պաշտոնյաները, հատկապես պետության ղեկավարը, պետք է լրացուցիչ պատասխանատվությամբ մոտենան իրենց կողմից սոցիալական ցանցերում կատարված արտահայտություններին՝ նկատի ունենալով դրանց հնարավոր լայն ազդեցությունը անձանց անձնական և ընտանեկան կյանքի, հեղինակության, ինչպես նաև հանրային խոսույթի և բանավեճերի մշակույթի նկատմամբ:

Անդրադառնալով Դիրքորոշմամբ նշված այն պնդմանը, որ «դոմփել» բառը թեև խոսակցական, այնուհանդերձ, անպարկեշտ բառ չէ՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ Փորձագիտական եզրակացության համաձայն՝ նշված բայը պատկանում է հայերեն խոսակցական լեզվի բառաշերտին և **գործածվում է ժարգոնային գործածության տիրույթում:** Հանձնաժողովն արձանագրում է, որ **ժարգոնային բառաշերտի մեջ մտնում են նաև գռեհկաբանությունները կամ հասարակաբանությունները,** որոնց մեջ հիմնականում մտնում են արհամարհական, անարգական, հայհոյական բառերը: Գռեհկաբանությունները որոշակիորեն տարբերվում են խոսակցական բառապաշարից իրենց ոճական-արտահայտչական գունավորմամբ և հիմնականում արտահայտում են բացասական երանգավորում («Հայոց լեզվի ոճագիտություն», Լևոն Եզեկյան, 2007թ., 179-180 էջեր):

Հանձնաժողովը գտնում է, որ «սեռական հարաբերություն ունենալ» արտահայտության չեզոք իմաստն արտահայտում են գրական լեզվի մեջ մտնող բառերը, ինչպես կենակցելը, զուգավորվելը, կողակցելը, իսկ ժարգոնային բառաշերտի մեջ մտնող բառերը, այդ թվում՝ դոմփելը, կարող են խոսքին, հատկապես՝ պաշտոնատար անձի խոսքին, հաղորդել առավելապես անվայելուչ կամ արհամարհական նրբերանգ:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Գրառում 1-ը, թեև կատարվել է ի պատասխան քննադատությունների և առնչվել է հանրային հետաքրքրություն ունեցող հարցի, այնուամենայնիվ, իր բառընտրության հետևանքով ունի կոպիտ և անվայելուչ նրբերանգ:

Հանձնաժողովը գտնում է, որ նշված արտահայտության կիրառումը հատկապես խնդրահարույց է՝ նկատի ունենալով, որ Գրառում 1-ը կատարվել է ՀՀ վարչապետի՝ հանրության հետ հաղորդակցվելու նպատակով գործածվող հարթակով, ինչի պայմաններում առավել մեծ է կատարված գրառման արդյունքում հանրային իշխանության հեղինակազրկման ռիսկը: Այսպես, 2025 թվականի հունիսի 3-ի թիվ 03/2025/Վ/Վ եզրակացությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ այն պայմաններում, երբ ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ ներքին իրավական ակտերով կամ ուղեցուցային բնույթի փաստաթղթերով նախատեսված չեն սոցիալական ցանցերում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անձնական և պաշտոնական էջերի տարանջատման, նշված էջերի վարման մեթոդաբանության հետ կապված կարգավորումներ՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է լրացուցիչ զգուշավորություն դրսևորեն սոցիալական ցանցերում էջերի վարման ընթացքում և հաշվի առնեն, որ **նշված էջերը հանրության կողմից ողջամտորեն կարող են ընկալվել որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի էջեր, իսկ դրանցում ներկայացված կարծիքները՝ վերագրվել հանրային իշխանությանը կամ հանրային իշխանության կոնկրետ մարմնին:**

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ Գրառում 1-ի հանրային ընկալմանը: Այսպես, Հարուցման որոշմամբ արձանագրվել է, որ սույն թվականի հունիսի 2-ի դրությամբ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում Գրառում 1-ին

ունեցել է մոտ 11.000 արձագանք, որոնցից մոտ 5.500-ն արտահայտել են օգտատերերի դժգոհությունը: Նույն պատկերն առկա է նաև սույն եզրակացության ընդունման օրվա դրությամբ: Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ Գրառում 1-ը ստացել է ավելի քան 7.100 մեկնաբանություն, որոնցից շատերը արտահայտում են մեկնաբանողների դժգոհությունը՝ նշելով, որ գրառումը հարիր չէ պաշտոն զբաղեցնող անձին, իսկ մի շարք օգտատերեր կասկածի տակ են դրել այն հանգամանքը՝ արդյոք ՀՀ վարչապետն է կատարել նշված գրառումը՝ նշելով, որ ՀՀ վարչապետի «էջը կոտրել են»:

Բացի այդ, Գրառում 1-ի վերաբերյալ սույն թվականի մայիսի 30-ին 14 հասարակական կազմակերպություններ հանդես են եկել հայտարարությամբ[16]՝ դատապարտելով նշված գրառումը, նշելով, որ այն թիրախավորում է հոգևորական գործչի ենթադրյալ զուգընկերոջը՝ ընդդիմադիր գործիչին վարկաբեկելու նպատակով: Հայտարարությամբ նշվել է, որ խստորեն դատապարտելի է նման բառապաշարն ու սեռական կյանքը քաղաքական թիրախավորման գործիք դարձնելը: Հայտարարությամբ հասարակական կազմակերպությունները կոչ են արել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հեռացնել գրառումը և հանրային ներողություն խնդրել խտրական արտահայտության ու ենթադրյալ զուգընկերոջ մասին տվյալների բացահայտման համար:

Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում հասարակական-քաղաքական գործիչների արձագանքին անդրադարձը՝ նկատի ունենալով, որ դրանք կարող են նաև պայմանավորված լինել կուսակցական պատկանելիություններով կամ այլ քաղաքական դրդումներով:

Այնուամենայնիվ, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի օգտատերերի և հասարակական կազմակերպությունների արձագանքի հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ հասարակության լայն շերտերի կողմից Գրառում 1-ն ընկալվել է բացասական կերպով: Գրառում 1-ի՝ հանրային բացասական արձագանքի մասին է վկայում նաև Գրառում 2-ը, որով ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նշել է. *«Հիմա որքան*

[16] Հասանելի՝ https://factor.am/896323.html

հասկանում եմ, մայիսի 29-ի իմ մի գրառման արձագանքը հետեւյալն է. ***«Իսկ ինչու՞ դոմփել»:*** *Մնացած մասով փաստորեն կոնսենսուս ունենք, որ սրբապիղծ «սրբազանների» հարցը պետք է լուծել:»:* Ըստ այդմ, ՀՀ վարչապետը ևս նշված գրառմամբ ընդունել է, որ «դոմփել» բայի գործածումը հանրության կողմից դրական կերպով չի ընկալվել:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ վարչապետի կողմից Գրառում 1-ի կատարումը խախտել է բարեկրթության և հարգալիրության սկզբունքը և ողջամտորեն կարող էր խիստ բացասաբար ընկալվել հանրության կողմից՝ հանգեցնելով հանրային իշխանության և հանրային ծառայության հեղինակության վնասման, նսեմացման կամ այլ կերպ արատավորման՝ հետևյալ հանգամանքների հաշվառմամբ՝

1) թեև գրառումը կատարվել է ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված քննադատությունների և բարձրացրել է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարց (եկեղեցականների կողմից Եկեղեցու կողմից հռչակված բարոյական չափանիշների պահպանումը), այնուամենայնիվ, այն կրել է գռեհիկ նրբերանգ՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով՝

1.1) գործածված «դոմփել» բառը «սեռական հարաբերություն ունենալ» իմաստով ընկալվում է որպես անվայելուչ արտահայտություն՝ նկատի ունենալով ոչ միայն բառի իմաստը, այլ նաև այն հանգամանքը, որ այն պատկանում է ժարգոնային բառաշերտին,

1.2) թեև հոգևոր սպասավորի կողմից սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքը կարող է համարվել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարց, նույնը չի կարող ասվել այն մասին, թե կոնկրետ ում հետ է հոգևորական սպասավորը գտնվում սեռական հարաբերություններում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ այն, որ Գրառում 1-ը ներառում է ակնարկ առ այն, որ հոգևորական սպասավորը սեռական հարաբերությունների մեջ է գտնվում իր հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձի կնոջ հետ, դրան լրացուցիչ կոպիտ երանգ է հաղորդում,

1.3) Գրառում 1-ը չի հասցեագրում ՀՀ վարչապետին ուղղված քննադատությունները, չի անդրադառնում դրանց, անգամ չի հիշատակում, որ գրառումը կատարվել է դրանց ի պատասխան, ինչպես նաև չի քննարկում

կուսակրոնության ուխտը խախտելու հետ կապված խնդիրները, այլ պարզապես վկայակոչում է որոշակի հոգևորականի կողմից սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքը, ինչը նվազեցնում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ բանավեճին նպաստելու տեսանկյունից գրառման կարևորությունը:

2) գրառումը կատարվել է ՀՀ վարչապետի կողմից հանրության հետ հաղորդակցվելու նպատակով գործածվող հարթակի միջոցով, ուստի այն ողջամտորեն հանրության կողմից կարող էր ընկալվել որպես Նիկոլ Փաշինյանի՝ որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ոչ որպես մասնավոր անձի, դիրքորոշում: Չնայած ՀՀ վարչապետի՝ կարծիքի արտահայտման ազատության հատկապես լայն սահմաններին, որպես բարձրաստիճան պաշտոնյա՝ սոցիալական ցանցերում հրապարակումներ կատարելիս վարչապետը պետք է նաև գիտակցի այն առանձնահատուկ ազդեցությունը, որ իր խոսքը կարող է ունենալ հանրային բանավեճի մշակույթի ու այլոց հեղինակության վրա,

3) հասարակության լայն շերտերի կողմից Գրառում 1-ը ընկալվել է բացասական կերպով:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Գրառում 1-ի կատարումը պարունակել է Կանոնագրքի 48-րդ կետի խախտման հատկանիշներ:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

1. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի կանոնի խախտման առկայության մասին:

2. Եզրակացությունը եռօրյա ժամկետում ուղարկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ